ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Նորին Ս. Օծություն Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա-ին,
(Անթիլիաս),
Երուսաղեմի Հայոց Պատրիարք ամենապատիվ Տ. ԵՂԻՇԵ արքեպիսկոպոսին
(Երուսաղեմ),
Թուրքիո Հայոց Պատրիարք ամենապատիվ Տ. ՇՆՈՐՀՔ արքեպիսկոպոսին
(Ստամբուլ),
Բարեխնամ բոլոր թեմական առաջնորդներին և գերապատիվ եպիսկոպոսներին:

Մեր Տիրոջ և Փրկչի սուրբ ծննդյան ավետիսով վերստին կբացվին լուսե դռները երկնքին, բաշխելու համար մեր հուսացյալ հոգիներուն երապի պես անուշ երգը հրեշտակներուն՝

«Յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Արարիչը մեր և պարգևատուն բարյաց, տիեզերքի ներդաշնակության օրենքն է որ կառաքե աշխարհ, մարդկության համայն, իբրև գերագույն բարոյական պատգամ, ցույց տալով մարդոց և ազգերուն բոլոր՝ ճամբան փրկության, ճամբան երջանկության:

Սիրո և խաղաղության պատգամը Աստուծո՝ կհնչե այսօր մանավանդ, տիրապես հզոր ու հրաշքի պես պայծառ, որպեսզի այլևս ոչ մեկ Կայեն չկարողանա սպանել իր եղբայրը՝ Աբել:

«Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ»:

Փա՛ռք Խաղաղության Իշխանին:

Եվ **«Երանի՛ խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին»:**

Ս. Ծննդյան ավետիսով կշնորհավորենք և կողջունենք Ձեզ և Մայր Աթոռ Ս. Էջմիածնեն կհղենք Մեր հայրապետական օրհնությունը համայն Մեր հավատացյալ վավակներուն, բարի մաղթանքներով, որ նոր տարին ըլլա խաղաղության տարի, արդարության տարի և եղբայրության տարի՝ եկեղեցյաց և ժողովրդոց համար:

«Քրիստոս ծնա՛ւ և յայտնեցա՛ւ»:

ՎԱՉԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Նմանօրինակ շնորհավորական գրություններ ուղարկվեցին նաև թեմական և կենտրոնական խորհուրդներին, Հայկական բարեգործական ընդհանուր միության կենտրոնական վարչության նախագահ պր. Ալեքս Մանուկյանին (Նյու-Յորք), Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության կենտրոնական խնամակալության մեծահարգ նախագահ դոկտ. Ժուլ դե Ակերեդո Պերդիգանին (Լիսաբոն), Աբգարյան ավանդի և Ս. Էջմիածնի հիմնադրամի հանձնաժողովին (Լոնդոն), Ս. Էջմիածնի հանձնախմբի նախագահ պր. Կ. Ալթունյանին (Բեյրութ), Վարդանանց ասպետներին (Ուոտերտաուն), Կալկաթայի հայկական ընկերության վարչության (Կալկաթա), հայրենակցական, մշակութային, տիկնանց, երիտասարդաց և օրիորդաց կանանց կազմակերպություններին, Մայր Աթոռի և Հոգևոր Ճեմարանի բարերարներին և ծանոթ ազգային դեմքերին:

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա, ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Վեհափա՛ռ Եղբայր ի Քրիստոս.

Նոր տարվան և Ս. Ծննդյան բարեբաստիկ տոներուն առթիվ, Ձերդ Սրբության կներկայացնենք Մեր սրտալից շնորհավորություններն ու ջերմագին բարեմաղթությունները:

Կմաղթենք ի բոլոր սրտե, որ Աստված հարցն մերոց. Ձեզի պարգևե քաջառողջ և երջանկալից երկար կյանք՝ լի հաջողությամբ և բարօրությամբ:

Ջերմեռանդն կաղոթենք, որ 1965-ը ըլլա արդարության տարի մը հայ ժողովուրդին համար:

Թող Խաղաղության Իշխանը, Տեր Հիսուս Քրիստոս, խաղաղություն շնորհե համայն մարդկության, և անշարժ ու անսասան պահե ու պահպանե Հայաստանյայց Ս. Եկեղեցին, մեր նվիրապետական Ս. Աթոռները և ազնվական հայ ժողովուրդը՝ ի խնամս մարդասիրության յուրո:

Մնամ եղբայրական սիրո ջերմ ողջունիվ, աղոթակից՝

ԽՈՐԵՆ Ա

Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո

ԱՆԹԻԼԻԱՍ

Նոր տարվան և Ս. Ծննդյան բարեբաստիկ առթիվ, մեր անունով, Ս. Հակոբա միաբանության և Հորդանանի մեր համայնքի կողմե, հարգանքով կներկայացնենք մեր ամենասրտագին շնորհավորությունները և կաղոթենք Ամենակալին, որպեսզի շնորհե Ձերդ Սրբության հարատև առողջություն, բազում երջանիկ տարիներ, լի հաջողությամբ և բարգավաճմամբ, և անսասանություն մեր Մայր Եկեղեցվույն՝ Ս. Էջմիածնին:

ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Պատրիարք հայոց Երուսաղեմի

ԵՐՈՒՍԱՂԵՄ

Վեհափա՛ռ Տեր.

Ամանորի և Ս. Ծննդյան տոնի երջանիկ առիթներով, կուգանք մեր կողմե և հանուն Պատրիարքությանս հոգևորական դասուն, պաշտոնական բոլոր մարմիններուն և համայն հավատացյալ հոտին, շնորհավորել Ձեր Ս. Օծությունը և մաղթել Վեհիդ և Մայր Աթոռի միաբանության երջանիկ տոնակատարություն: Կաղոթենք այս առթիվ, որ Աստված շնորհե Սրբությանդ երկար ու քաջառողջ կյանք և արդյունաբեր պաշտոնավարություն:

Թող մանկացյալ Փրկչի Ծննդյան առթիվ աշխարհի ավետված խաղաղությունը և համերաշխության եղբայրական ոգին տիրապետող դառնան մարդոց սրտերուն և

ազգերու հարաբերությանց մեջ, ու մենք արժանի ըլլանք արձակ հոգիով եղանակել հրեշտակային մեղեդին.

«Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Եվ ավելի երջանիկ սրտով օրհներգենք.

«Երկար կեանք տուր Հայրապետին,
Երկար օրեր՝ Հայոց Հոր:
Տե՛ր, անսասան պահիր դու միշտ
Քո իսկ հիմնած Մայր Աթոռ»:

Կմատչինք, հանուն ամբողջ մեր համայնքին, Օծելույդ Ս. Աջին ի համբույր:
Խոնարհ աղոթակից՝

ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Պատրիարք հայոց Թուրքիո

ՍՏԱՄԲՈՒԼ

Ամանորի և Ս. Ծննդյան տոների առթիվ, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով, ստացվեցին նաև ամենաջերմ և հարգալից զգացմունքներով գրված բազմաթիվ այլ շնորհավորական հեռագրեր և նամակներ արտասահմանի և ներքին մեր բոլոր թեմերի թեմական առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց վանական կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից: